

Ե Զ Ր Ա Կ Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Գառնիի բաղմամյա հնագիտական պեղումների միջոցով պարզվում է, որ այն Հաւկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի հնագույն բնակավայրերից մեկն է եղել, որտեղ շնորհիվ ընակլիմայական բարենպաստ պայմանների, կյանքն անընգմեջ հարաակել է, սկսած մթա III հազարամյակից մինչև ուշ միջնագար:

Պեղումների ընթացքում վաղ բրոնզեդարյան երեք կառուցողական տեղում ի հայտ եկած նյութերն ապացուցում են Գառնիի երկրագործ-անասնապահների մշակույթի՝ դարգացման բարձր մակարդակը, որը ընդգրկում էր մետաղագործության մի նոր վերելքով և նրա հետ կապված տեխնիկայի առաջընթացով:

Պեղումներով հայտնաբերված հնագիտական նյութերը ցույց են տալիս, որ Գառնին վաղ բրոնզի դարաշրջանի մետաղագործական դարգացած օջախներից մեկն է եղել: Իրեն ապացույց կարելի է հիշատակել այստեղ բացված ձուլարան-հնոցը, կացնի կաղապարը, մետաղի նստվածք պարունակող կրթիւնները, մետաղական խարամը և ձուլման պրոցեսի հետ կապված այլ իրեր, ինչպես և տեղում մետաղից պարաստված ղենքերը, ախատանքային գործիքները, դարգերը և այլն:

Մետաղամշակման, մետաղաձուլության բարձր մակարդակը հնարավորություն էր տալիս ընդ ցեղերին ոչ միայն մետաղե իրեր, այլև տարբեր համաձուլվածքներ ստանալ՝ պղնձի և մկնգեղի, պղնձի և կապարի միացությունից, ինչպես նաև սաքուր կտույտից:

Մետաղագործության այս նոր վերելքով էր ընդգրկվում Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզի մշակույթն ընդհանրապես:

Նախորդ փուլի՝ էնեոլիթի համեմատ ղգալի առաջադիմությունը մետաղագործության ասպարեղումը բնորոշվում է ոչ միայն տարբեր համաձուլվածքների ստացմամբ, այլև մետաղական իրերի քանակի ղգալի աճով, նրանց ձևերի բաղմաղանության և ձուլման փակ կաղապարների երեան գալով: Մետաղագործության վերելքով էր պայմանավորված արհեստների ուղղ ձուլելի ղարգացումը:

Ավելի կատարյալ մեաաղե գործիքները իթանում էին քսրակոփության, փայտամշակման, շինարվեստի, կաշեգործության և մանածագործության ղարգացմանը: Օրինակ՝ մեաաղից տարատեսակ կացինների և այլ գործիքների սուտքը փայտամշակման ասպարեղ, պայմաններ ստեղծեց բաղմաղան աղխատանքային գործիքների պատրաստման:

Անասնապահության ղարգացումը հնարավորություն ստեղծեց իոշոր եղջերավոր կենդանիների, որպես քաշող ուժի օգտաղործման: Այսպիսով, պայմաններ էին ստեղծվել բրչային հոգագործությունից անցնելու պարղու-

սակ արորով հողի մշակմանը: Մետաղե գործիքները նոր անխնիկալով դի-
նեցին ևրկրագործությունը, նպաստեցին գյուղատնտեսական գործիքների կա-
տարկադործմանը, ինչպես նաև ջրամբարների, ամբարտակների, տեղական
ջրանոցների ու առուների անցկացմանը:

Հատնարկված ոսկրաբանական նյութի ուսումնասիրությունն, ինչպես
տեսանք, վկայում է Գառնիում մանր եղջերավոր կենդանիների դլխաքանա-
կի աճը և հեռադնաց անասնապահության զարգացած լինելը: Այսպիսով,
մթա III հաղարամյակի մշակույթը բնորոշվում է տնտեսության աննախըն-
թառ վերելքով: Պարզ է, որ երկրագործության և անասնապահության վե-
րելքն իր հերթին խթանում էր մետաղագործության զարգացմանը:

Գառնիում հայտնաբերված նյութերն ապացուցում են, որ տեղական
հասարակության տնտեսության մեջ լայն և բաղմակողմանի դործածություն
էր ստացել խեցեղենը, որի արտադրությունը նույնպես կատարելագործվել
էր: Խեցեղործությունը մեծ դեր խաղալով կենցաղում, միաժամանակ ժողո-
վրդակուն դեղարվեստական ստեղծագործության կարևոր բնագավառ էր,
որը դրսևորում էր ընդհանուր դեղարվեստական նաշակը, հաճախ նաև
սրատկերացումներն ու ըմբռնումները: Մթա III հաղարամյակից խեցեղենի
դարգամոտիվներում ևըեսն են դալիս թեմատիկ կոմպոզիցիաներ, որոնցում
իրենց արտահայտությունն են դանում ընտության զարթոնքը, հավերժ շարժ-
ման փոփոխության, անվերջության, դիշերվա և ցերեկվա, լույսի և խավա-
րի, մեռնող և հարություն առնող ընտության հասկացողությունները, լուսնի և
սրերի, նրանց հետ ադերսվող պաղարերության պաշտամունքը, որին, ինչպես
տեսանք, սերտորեն ադերսվում է նաև վիշտպի պաշտամունքը:

Վաղ բրոնզի դարաշրջանում, ինչպես մերջին հայտնագործություններն
ևն ապացուցում, սև փայլեցրած խեցեղենին ուղեկցում է դունաղարդը:

Ընդհանրապես Հայկական լեռնաշխարհում մթա III հաղարամյակի
ուարեր փուլերում խեցեղենի զարգացումը սերտորեն կապված էր բրոնզի
մշակույթի հետ և ուղեկցում էր նրան: Խեցեղենի բաղմաթիվ դուղահեռները
հավաստում են միջցեղային կապերի ամրապնդումը, ինչպես նաև երևան են
լերում փոքրտսիական և կիլիկյան փոխադեցությունների որոշակի հետքեր:

Արտադրողական ուժերի զարգացման ու անխնիկալի վերելքի պայման-
ներում մի նոր առաջընթաց է ապրում նաև շինարարական գործը:

Գառնիի վաղ բրոնզի դարգացած բնակատեղիում կենտրոնական կլոր
կացարանների և նրանց կից քառանկյունի շինությունների կողքին երևան
են դալիս ոչ միայն մեկ, այլ երկու կլոր կացարաններից և նրանց կից շինու-
թյուններից կաղմված կոմպլեքսներ: Մի քանի կլոր կացարանների և հա-
յակից շինությունների կոմպլեքսներից է կաղմված նաև Յանիկ-թեփեի «4B»
շերտի բնակատեղին:

Վերոհիշյալ փաստերն ապացուցում են, որ երկու կլոր, կից կացարան-
ներով բնակարանային կոմպլեքսներում ընակվում էին աղղակից կամ ար-
լունակից ընտանիքներ՝ կաղմելով դերդաստանի բաղադրիչ մասերը: Ժա-
մանակի ընթացքում աճելով, նրանք արոհվել են և ի վերջո հիմք դարձել
նոր դերդաստանների: Վաղ բրոնզեդարում նկատվում է երկրագործական հա-
մայնքների քանակական աճ: Այսպիսով, աճեցվող կենդանիների և կուաակ-
ված պաշարների պաշտպանությունը թշնամի ցեղերից, անհրաժեշտաբար
սուղացեց Գառնիի և վաղ բրոնզեդարյան այլ բնակատեղիների պարսպա-
պատումը:

Վերոհիշյալ ժամանակաշրջանին բնորոշ է նաև գուլքային անհավասարությունը, որը հավաստվում է իր սեփական դույնն ունեցող գերդաստանների մեկուսացման տեղեկացով, թաղման որոշ ծեսերի փոփոխությունով և նրանց ուղեկցող պերճանքի առարկաներով: Միայն III հազարամյակի վերջում սկսվում է նախնադարյան համայնական հաւարակության ինտենսիվ քայքայման պրոցես: Այն թելադրված էր տոհմա-ցեղային ավադանու բառժրացումով, հղորացումով:

Փոփոխություններ են կատարվում նաև մարդու ուշխարհայացքում: Տեղի է ունենում անհատի նշանակալից վարդացում, առաջադիմություն, որը նպաստում է միջավայրի ակտիվ վերափոխմանը:

Սակայն գուլքային անհավասարությունը ավելի ուժեղանում է հասարակության զարգացման հաջորդ փուլում՝ միջին բրոնզի դարաշրջանում, որը հանդեցնում է բավականաչափ ստվար վերնախավի ամրապնդմանը և նախնադարյան համայնական կարգի վերջնական քայքայմանը: Այս բնորոշումն է նաև հին արևելյան երկրների հետ ավելի ուժեղ մերձեցումով, մեծաքանակությամբ մի նոր, հղոր վերելքով, արհեստների ու արվեստի բարձր զարգացումով:

Ինչպես վերը տեսանք, բաղամթիվ օրինակներով հաստատվում է, որ միջին բրոնզի մշակույթը վաղ բրոնզի անմիջական շարունակությունը է իթնիկ միեւնույն միջավայրում նրա զարգացման հաջորդական փուլն է ներկայացնում, ընդդրկելով տարածման նույն սահմանները:

Գառնիի խեցեղենի նմուշների և նրանց զուղահեռների համեմատությունից պարզվում է, որ փոխանցվող բաղամթիվ զարգամտիվների հետ, միջին բրոնզի դարաշրջանում երևան են դալիս խեցեղենի նաև նոր ձևեր և նատարման տարատեսակ եղանակներով հարուստ նոր ուժի զարգամտիվներ: Երոնցում նկատվում է բովանդակության հարստացում:

Միջին բրոնզի մշակույթը բնորոշվում է նաև բնակչության պատկերացումների և աշխարհաճանաչողության ընդարձակմամբ:

Գառնիի վերոհիշյալ ժամանակաշրջանի խեցեղենի մասնալրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն բաղամթիվ թելերով կապված է շուրջական լեռնաշխարհի այլ հուշարձանների հետ՝ ունենալով իր ուրույն տեղային հատկանիշները, այնուամենայնիվ ուժեղ կերպով պահպանում է այդ մշակույթին բնորոշ խեցեղենի ընդհանուր ձևերը, զարգամտիվներն ու նրանցով կաղմված կոմպոզիցիաները:

Գառնիում ուշ բրոնզի և վաղ երկաթի շրջանի ոչ մեծ տրանակ նութերն ապացուցում են, որ Գառնին եւ շէր մնում զարգացման ընդհանուր ընթացքից:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի խեցեղենի ուսումնասիրությունից նույնպես հետևում է, որ այն նախորդ փուլերի անընդմեջ զարգացման հաջորդական օղակն է և տեղական ավանդույթների շարունակողը:

Գառնիի սիսամատիկ պեղումներն, անշուշտ, հնարավորություններ կընձեռեն լուսարանելու Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկների պատմությանն ու մշակույթին վերաբերող մի շարք պատմահնարիտական հարցեր, սկսած մթա III հազարամյակից: